

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-385-18.11.2013-ԳԿ-010/0) վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածում հստակեցման կարիք ունի «ձայնային ռեժիմի կտրուկ ուժեղացում» հասկացությունը:

2. Նախագծով առաջարկվում է սահմանել արգելող նորմ, որի խախտման իրավական հետևանքները նախատեսված չեն ոչ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ոչ էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով: Հետևաբար, այն կկրի հոչակագրային բնույթ:

Խնդրի համապարփակ կարգավորման նպատակով անհրաժեշտ է փոփոխություն կատարել նաև նշված օրենքներից մեկում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առողջապահության ոլորտում
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն
առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք)
ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և
կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական
հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա
բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող
իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող
հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական
վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»
ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»
ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա

կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով գովազդի հեռարձակման հետ կապված հնարավոր բացասական հետևանքների վերացմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ նախատեսվում է նվազեցնել զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով գովազդի հեռարձակման հետ կապված հնարավոր բացասական հետևանքները:

Նախագծի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են գովազդային ծառայությունների շուկաների հետ:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխությանը չի հանգեցնում:

Պ-385-18.11.2013-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԳՈՎԱԶԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2 մասով.

«3.2 Արգելվում է գովազդի հեռարձակման ժամանակ գովազդակրի կողմից ծայնային ռեժիմի կտրուկ ուժեղացումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԳՈՎԱԶԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով գովազդի հեռարձակման հետ կապված հնարավոր բացասական հետեւանքների նվազեցման պահանջով:

Առաջարկվող օրենքի նախագծի նպատակն է՝ նպաստել Հայաստանի Հանրապետությունում նյարդային համակարգի եւ զգայական օրգանների հիվանդությունների տարեցտարի աճող տեմպերի կրճատմանը: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների 2007-2011 թվականներին հանրապետությունում նկատվել է նյարդային համակարգի եւ զգայական օրգանների հիվանդությունների աճ եւ որ ամենամտահոգիչն է՝ այդպիսի աճ նկատվել է նաեւ 0-14 տարիքային խմբի երեխաների մոտ (<http://www.armstat.am/file/doc/99471458.pdf>): Հարկ է նշել, որ երեխաների լսողական օրգանը շատ ավելի նուրբ եւ խոցելի է, քան մեծահասակներինը, հետեւաբար, գովազդի հեռարձակման ժամանակ գովազդակրի կողմից ծայնային ազդանշանների կտրուկ բարձրացումը ոչ միայն կարող է հանգեցնել սթրեսային հիվանդությունների առաջացման, այլեւ՝ լսողական օրգանների ֆունկցիոնալ խանգարման:

Գիտնականորեն հիմնավորված է, որ աղմուկի բարձր մակարդակը կարող է ազդել վեգետատիվ ֆունկցիաների, տարբեր օրգան-համակարգերի վրա (սրտանոթային, ստամոքսաղիքային, հորմոնային): Հանկարծակի աղմուկը հանդիսանում է սթրես առաջացնող գործոններից մեկն:

Գովազդի հեռարձակման ժամանակ ծայնի կտրուկ բարձրացումը ոչ միայն հանգեցնում է սթրեսի հակված անձանց մոտ մի շարք հիվանդությունների զարգացմանը, այլեւ կարող կարող է խոչընդոտ հանդիսանալ արդեն իսկ սթրեսային հիվանդություններով տառապողների մոտ հիվանդության հաղթահարմանը:

Ակնկալվում է, որ օրենքի նախագծի ընդունմամբ հայաստանյան հասարակությունը կապահովագրվի զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով գովազդի հեռարձակման հնարավոր վնասակար հետեւանքներից: